# ՔԱՌԵԱԿՆԵՐ

Գիտցիր թէ գլուխդ պարապ տակառ է,
Յաւակնոտութիւնըդ անըսպառ է,
Գրութիւնդ անարուեստ բառապաշար է,
Ինքդ անհանճար ես, հոգիդ ալ չար է:

Կը սիրեմ թ'եւ քեզ, սակայն չեմ կրնար բնաւ քեզ ներել,
Վահան Տէրեանի «Երգերը թըքոս» — քեզի չեմ ներեր.
Ո՞վ է իրեն պէս այնքա՛ն մեղրածոր երգեր մեզ բերեր,
Ո՞վ է իրեն չափ քաղցր թախիծով մեր սիրտն օրօրեր:

Նորէն քու թախիծն է իջեր,
Տարածուեր ամենուր զերթ մըշուշ.
Սի՛րտս կ'ուզէ յաւիտեան ննջել,
«Մոռանալ, մոռանալ» ամէն յուշ:

Երնէ՜կ ըլլայի Լոյսի մ'շող պայծառ,
Վերն հիւանդներու սնարին անճար,
Անցնելու զիրենք «մազի կամուրջ»էն
Անդին, որ խաղաղ, աներազ ննջեն:

Ու վերջին պահուդ, տըղաս,
Զըլլայ թէ վախէդ դողաս.
Հըպարտ, «մնաք բարով»դ ըսէ,
Լոյսով թող դէմքըդ շողայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@